13370

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

«05» 10 2022թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0150-22

Ձեռնարկողը՝ ***«Վ.Է.Վ.» ՍՊԸ***
ՀՀ Տավուշի մարզ, ք.Իջևան, Արցախյան փողոց 94/2

Գործունեությունը՝ ***Տավուշի մարզի Հովքի սփորերկրյա քաղցրահամ ջրի աղբյուրների թիվ 1 և 2 փեղամասերում արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն***
ՀՀ Տավուշի մարզի, Դիլիջան համայնքի, Հովք բնակավայր

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի պարտականությունները կատարող՝ Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր՝ 15 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0150-22

«05» 10 **2022թ.**

Տավուշի մարզի Հովքի ստորերկրյա քաղցրահամ ջրի աղբյուրների թիվ 1 և 2 տեղամասերում արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Ձեռնարկող՝	«Վ.Է.Վ.» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման /ՇՄԱԳ/ հաշվետվություն
Գործունեությունը՝	«Ա» կատեգորիա
Տեղադրման վայրը՝	ՀՀ Տավուշի մարզի, Դիլիջան համայնքի, Հովք բնակավայր

Ներածական մաս. «Վ.Է.Վ.» ՍՊ ընկերությունը /այսուհետ՝ Ընկերություն/ նախատեսում է իրականացնել՝ Տավուշի մարզի Հովքի ստորերկրյա քաղցրահամ ջրի աղբյուրների թիվ 1 և 2 տեղամասերի հաշվարկված և հաստատված պաշարից քաղցրահամ ջրի արդյունահանում՝ արդյունաբերական /շշալցման/ նպատակով:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի, 4-րդ մասի, 2)-րդ կետի, «ե.» ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը դասակարգվում է «Ա» կատեգորիայի գործունեության տեսակների ցանկում:

Տավուշի մարզի Հովքի ստորերկրյա քաղցրահամ ջրի աղբյուրների թիվ 1 և 2 տեղամասերում Ընկերությունը իրականացրել է քաղցրահամ ջրերի հիդրոերկրաբանական ուսումնասիրություններ, որի արդյունքում ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 15.04.2021թ. թիվ 496-Ա հրամանով 2020 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ B կարգով հաստատվել են աղբյուրների պաշարները՝ 1.73լ/վրկ կամ 0.149հազ.մ^3/օր քանակով, որից՝ աղբյուր թիվ 1 - 1.02լ/վրկ կամ 0.088հազ.մ^3/օր և աղբյուր թիվ 2 - 0.71լ/վրկ կամ 0.061հազ.մ^3/օր:

Քաղցրահամ ջրի պահանջվող ջրաքանակը կազմում է 1.53լ/վրկ, այդ թվում՝ 1-ին աղբյուր՝ 0.9 լ/վրկ, 2-րդ աղբյուր՝ 0.63 լ/վրկ, ելնելով արտադրամասի հզորությունից օրական 8 ժամյա գրաֆիկով աշխատելու դեպքում արտադրամասում կարող է շշալցվել 22400լ/օր, որը կազմում է 0.77 լ/վրկ, այսինքն 1.53լ/վրկ ջրաքանակից շշալցվելու է 0.77լ/վրկ:

Նկարագրական մաս. Հովքի ստորերկրյա քաղցրահամ ջրի աղբյուրների թիվ 1 և 2 աղբյուրները գտնվում են Հայաստանի Հանրապետության հյուսիս-արևելյան շրջանում, Տավուշի մարզի Հովքի վարչական տարածքի արևելյան ծայրամասում, Աղստև գետի միջին հոսանքի ավազանում:

Թիվ 1 աղբյուրի տեղամասը գտնվում է Աղստև գետի աջափնյա ավազանում, Հովք գյուղից 2.6 կմ դեպի հյուսիս-արևելք, զբաղեցնում է 0.35հա մակերես՝ 1020.2-1055.1մ բացարձակ բարձրությունների վրա, իսկ բուն աղբյուրը գտնվում է 1030մ բացարձակ բարձրության վրա:

Թիվ 1 ստորերկրյա քաղցրահամ ջրի աղբյուրի կոորդնատներն են (ARM WGS-84 կոորդինատային համակարգով)՝ X=4516013, Y=8505858, իսկ աղբյուրի տեղամասի ծայրակետային կոորդինատներն են.

02543163
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ
ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION
OF EXPERTS

	Թիվ 1 աղբյուրի տեղամաս	
Հ/h	X	Y
1.	4516019	8505841
2.	4516044	8505823
3.	4516044	8505884
4.	4515976	8505884
5.	4515976	8505821

Թիվ 2 աղբյուրի տեղամասը գտնվում է Աղստև գետի աջափնյա ավազանում, Հովք գյուղից 3.3 կմ դեպի հարավ-արևելք, զբաղեցնում է 0.15հա մակերես՝ 830.5-850.5 բացարձակ բարձրությունների վրա, իսկ բուն աղբյուրը գտնվում է 840մ բացարձակ բարձրության վրա՝ թիվ 1 աղբյուրից 1.6 կմ դեպի հյուսիս-արևմուտք:

Թիվ 2 ստորերկրյա քաղցրահամ ջրի աղբյուրի կոորդնատներն են (ARM WGS-84 կոորդինատային համակարգով)՝ X=4517519, Y=8505263, իսկ աղբյուրի տեղամասի ծայրակետային կոորդինատներն են.

	Թիվ 2 աղբյուրի տեղամաս	
Հ/h	X	Y
1.	4517537	8505241
2.	4517537	8505281
3.	4517498	8505282
4.	4517498	8505241
5.	4517522	8505245

Երկու աղբյուրների ջրերն, ըստ լաբորատոր հետազոտությունների արդյունքների անգույն են, անհոտ, թափանցիկ և առանց նստվածքի: Ռեժիմային դիտարկումների արդյունքում պարզվել է, որ աղբյուրների ջրերն ունեն կայուն ծախս և ջերմաստիճան: Ջրի ծախսերի մեծացման կամ իջեցման ժամանակահատվածները նույն հիդրոերկրաբանական պայմաններում կախված են տվյալ տեղամասի զբաղեցրած հիպսոմետրիկ նիշից: Աղբյուրների ջրերի սնուցումը կատարվում է մթնոլորտային տեղումների և ինֆիլտրացիայի հաշվին:

Տեղամասի աղբյուրները կապված են վերին յուրայի հասակի կարբոնատային ճեղքավոր և ճեղքա-կարստային ջրաթափանց ապարների հետ, որտեղ ջրերի ինֆիլտրացիայի միջին արժեքը կազմում է 36985172մ³/տարի կամ 102737մ³/օր, իսկ ջրի հոսքի մոդուլը 1կմ² մակերեսի վրա կազմում է միջինը 6.83լ/վրկ: Ստորերկրյա ջրերը տարածված են ճեղքավորված ապարների հողմահարված գոտում:

Դիտարկման տարիների ընթացքում /2019-2020թ.թ./ չի նկատվում ջերմաստիճանի կտրուկ փոփոխություն, որը վկայում է աղբյուրի կայուն սնման /սեզոնային կամ ժամանակավոր/ գործոնի մասին և ըստ ջերմաստիճանային ռեժիմի աղբյուրների ջրերը բնորոշվում են որպես սառը ջուր: Աղբյուրների ծախսի փոփոխման աստիճանը տարեկան կտրվածքում տատանվում է աղբյուր 1-ում 0.30-3.24 լ/վրկ, իսկ աղբյուր 2-ում 0.32-2.25լ/վրկ սահմաններում: Ընդհանուր առմամբ աղբյուրները բնորոշվում են կայուն ծախսով և ջերմաստիճանով:

Թիվ 1 և 2 քաղցրահամ աղբյուրի ջրերը պիտանի են խմելու և շշալցման համար և դրանց օգտագործումից առաջ իրականացնել մանրէազերծում, ինչպես ՀՀ տարածքի բոլոր քաղցրահամ ջրերը:

Աղբյուրների սնման և բեռնաթափման մարզերում բացակայում են ստորերկրյա ջրերի աղտոտող օբյեկտները: Տարածքում բացակայում են տեխնածին գործոնները, որոնք կարող են պայմանավորել ստորերկրյա ջրերի որակական և քանակական փոփոխությունները: Հուսալի

աղբյուրակազման դեպքում, աղբյուրի շահագործման համար կստեղծվի բավարար սանիտարական պայմաններ: Ջրի նմուշները քիմիական լաբորոտորիայում ենթարկվելու է կրճատ քիմիական անալիզի, որտեղ որոշվելու են /Na +K, NH_4, Ca,Mg, Fe, Cl,SO_4,NO_2, NO_3,CO_3,HCO_3, SiO_2,H_2S, պարունակությունները, որոշվելու է ջրի կոշտությունը, հանքայնացումը, չոր նստվածքը, թթվայնությունը, ջրի ֆիզիկական հատկությունները և այլն:

Աղբյուրների ջրերի բարվոք մանրէաբանական կազմը, շրջակա միջավայրը, հնարավոր աղտոտող օբյեկտների բացակայությունը, սնման և բեռնաթափման մասերում բարենպաստ պայմաններ են ստեղծում երկրորդ և երրորդ /սահմանափակ ռեժիմի/ գոտիների ոչ անհրաժեշտության և առաջին՝ խիստ ռեժիմի գոտու անհրաժեշտության մասին, որի նպատակն է աղբյուրների տեղամասերի պահպանումը: Ստորերկրյա քաղցրահամ ջրերի շահագործումը իր մեջ ներառում է աղբյուրների վիճակը, որն ապահովում է աղբյուրների ելքերը հնարավոր աղտոտումից պահպանելու հնարավորությունը:

Երրորդ սանիտարական գոտին ընդգրկում է քաղցրահամ ջրերի սնման ավազանը, որը համընկնում է Աղստև գետի վերին հոսանքի ավազանի հետ, շրջափակված է Իջևանի լեռնաշղթայի ջրբաժան մասի հարավ-արևելյան ճյուղերով:

Երկրորդ /սահմանափակման ռեժիմի/ սանիտարական պահպանության գոտու մեջ է մտնում Հովք գյուղի վարչական տարածքը և Աղստև գետի միջին հոսանքի աղբյուրների տեղամասերը:

Առաջին խիստ ռեժիմի սանիտարական պահպանության գոտին ընդգրկում է թիվ 1 և 2 քաղցրահամ ջրի աղբյուրները, որոնցով հաշվարկվել և հաստատվել են հանքավայրի շահագործողական պաշարները: Առաջին սանիտարական պահպանության գոտու պահպանման համար, ելնելով աղբյուրների ելքերի ռելիեֆային պայմաններից, կառույցը արգելափակվելու է մինչև 30մ շառավղով: Հաշվի առնելով ջրահավաք աղբյուրների տեղամասերի պայմանները նախատեսվում է թիվ 1 աղբյուրի առաջին սանիտարական պահպանության գոտու մակերեսը սահմանել 685.7մ^2 (11.5մx59.63մ=685.7մ^2), իսկ թիվ 2-րդ աղբյուրի համար առաջին սանիտարական պահպանության գոտու մակերեսը սահմանել 1134մ^2 (18.4x61.63մ=1134մ^2):

Գոտու տարածքում թույլատրվում է լեռնային և հողային աշխատանքների կատարումը, կառույցների շինարարությունը /կապտաժների, ջրագծերի, պահակակետի, ջրի տարաներ/, աղբյուրների գլխամասերի կահավորման, ամրացնող, հակասողանքային և հակաէռոզիոն աշխատանքների կատարումը, որոնք ապահովում են ստորերկրյա ջրերի հանքավայրն ու ջրատար հորիզոնները աղտոտումից, նպաստում դրանց պահպանությանը: Ջրհավաք աղբյուրները շրջափակվելու են մետաղական ցանկապատով /սանիտարական պահպանության առաջին խիստ ռեժիմի գոտիով/: Ջրհավաք աղբյուրներն իրենց գլխամասային սարքավորումներով պետք է ներառվեն սանիտարական պահպանության առաջին /խիստ ռեժիմի/ գոտում: Կողմնակի անձանց մուտքը սանիտարական պահպանության առաջին /խիստ ռեժիմի/ գոտի խստիվ արգելվում է:

Հովքի ստորերկրյա քաղցրահամ ջրի աղբյուրների թիվ 1 և 2 տեղամասերը գտնվում են «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Իջևանի անտառտնտեսություն» մասնաճյուղի տարածքում:

Հովքի քաղցրահամ ջրերի թիվ 1 և 2 աղբյուրների տեղամասերի տարածքները չեն հանդիսանում բնության հատուկ պահպանվող տարածքներ, հետևաբար չի իրականացվելու վտանգված էկոհամակարգերի պահպանություն: Գործունեության տարածքին ամենամոտ հատուկ պահպանվող տարածքը «Դիլիջան» ազգային պարկն է, որից թիվ 1 և 2 աղբյուրների տեղամասերը գտնվում են համապատասխանաբար 1.5կմ և 3.05կմ հեռավորությունների վրա:

Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում կենսաբազմազանության և էկոհամակարգերի վրա հնարավոր ազդեցությունը գնահատելու համար ուսումնասիրվել են տվյալ շրջանին բնորոշ կենսաբազմազանությունը, ՀՀ բույսերի և կենդանիների կարմիր

ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

գրքերում գրանցված բույսատեսակների և կենդանատեսակների առկայության վերաբերյալ տեղեկատվությունը, հիմնվելով կենսաբազմազանության վերաբերյալ ՀՀ-ում գերծող օրենքներից, ՀՀ-ի կողմից ստորագրված համապատասխան միջազգային կոնվենցիաներից և պայմանագրերից, որը հիմք է ծառայել նաև անհրաժեշտ բնապահպանական միջոցառումների նախատեսման համար: Գործունեությունն իրականացվելու է ՀՀ կառավարության 2007թ. օգոստոսի 30-ի «Պետական անտառային հողերում անտառային տնտեսության վարման և անտառօգտագործման հետ չկապված աշխատանքների իրականացման կարգը սահմանելու մասին» N 1045-Ն որոշման պահանջների համաձայն, որևէ ծառահատում չի իրականացվելու, պահպանվելու են անտառային և հողային օրենսգրքերի պահանջները:

Հովքի քաղցրահամ ջրերի թիվ 1 և 2 աղբյուրների տեղամասերում բուսականության գերիշխող տիպը անտառային է: Մինչև 800-1300մ բարձրություններում առկա են հիմնականում կաղնու և բոխու, 1300-1900մ-ում՝ հաճարենու և արևելյան կաղնու անտառները: Ռելիեֆի բարձրադիր հատվածներում անտառները համամեմատաբար նոսր են, կղզյակների ձևով առկա են ենթալպյան մարգագետինները: Այստեղ գերակշռում են սաղարթավոր տերևաթափ տեսակները՝ արևելյան հաճարենին (Fagus orientalis), վրացական կաղնին (Quercus iberica), խոշորառէջ կաղնին (Q. macranthera), կովկասյան բոխին (Carpinus caucasica), ղաժին կամ արևելյան բոխին (C. orientalis):

Հովքի քաղցրահամ ջրերի թիվ 1 և 2 աղբյուրների տարածաշրջանում կենդանական աշխարհի ներկայացուցիչներից հանդիպում են ասիական մորեխ, թռչող զամբիկ, ագրիոն տեսակի ճպուռներ, հիդրոմետրա, ջրային բույսերի վրա բնակվող դոնացիա բզեզներ, սովորական դոդոշ: Տեղամասի հարակից տարածքներում դիտարկվել է փայտփոր, բու և կկու, կաթնասուներից՝ անտառամուկ, սկյուռ, գայլ, աղվես, եվրոպական նապաստակ:

Գործունեության ենթակա տարածքում կենդանական աշխարհի բնադրավայրեր և միգրացիոն ուղիներ, ինչպես նաև ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակներ և կենդանատեսակներ չեն հայտնաբերվել:

Թիվ 1 և 2 աղբյուրների տեղամասերում կատարվելու են կապտաժների վերանորոգման աշխատանքներ, որի ժամանակ բացառվելու են ծառահատումները:

Նախատեսվող գործունեության ճարտարապետա-հատակագծային լուծումներն այնպես են տրված, որպեսզի ծառեր չհատվեն: Խողովակաշարերը տեղամասերից մինչև արտադրամաս նախատեսվում է անցկացնել անտառային և դաշտային գրունտապատ ճանապարհների հարակից տարածքներով:

Նախատեսվող գործունեության վայրը չի առնչվում էկոլոգիապես զգայուն տարածքների՝ վայրի բնության կամ այլ արգելոցի, ազգային զբոսայգու կամ միջազգային նշանակության այլ տարածքների հետ: Գործունեության իրականացման հետևանքով պատմամշակութային և բնության հուշարձաններն անմիջական ազդեցության չեն ենթարկվելու, քանի որ աղբյուրների արդյունահանման և արտադրամասի կառուցման տարածքներում, ինչպես նաև դրանց հարակից տարածքներում բնության և պատմամշակույթային հուշարձանները բացակայում են: Ստորերկրյա քաղցրահամ ջրի թիվ 1 և 2 աղբյուրների տարածքները գտնվում են Հովքի գյուղի պատմամշակութային հուշարձաններից 4.3կմ հեռավորության վրա: Այնուամենայնիվ նախագծի իրականացման ժամանակ արտադրամասի և հարակից տարածքներում անհայտ, հնագիտական արժեքների հայտնաբերման դեպքում դիտարկվել է հետևյալ ընթացակարգը. Շինարարական աշխատանքների ընթացքում որևէ հնագիտական շերտի կամ հուշարձանի հայտնաբերման դեպքում շինարարական աշխատանքներն անմիջապես դադարեցվելու են և տեղեկացվելու է համապատասխան պետական լիազոր մարմնին, համաձայն ՀՀ գործող օրենսդրության, հետագա գործողությունները կազմակերպելու համար:

Ընկերությունը նախատեսում է աղբյուրների տեղամասերի հարևանությամբ 1-ին տեղամասից 1500մ դեպի հյուսիս-արևմուտք, իսկ 2-րդ տեղամասից 500մ դեպի հարավ-

02543163
ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

արևմուտք նախատեսել 0.2942 հա մակերեսով տարածքում կառուցել ջրի շշալցման ժամանակակից տեխնոլոգիաներով և սարքավորումներով հագեցած արտադրամաս:

Արտադրամասում նախատեսվում է լաբորատորիա, վարչական մաս, պահեստ՝ երկու մասնաբաժնով, շշերի պահեստավորման, քիմիական և այլ նյութերի ու խոտանված շշերի տեղակայման համար, սանհանգույցներ, ցնցուղարան, լվացարան: Շշալցման արտադրամասի չափերը սահմանված է 39.40x13.40=527.96մ², պահեստներ՝ 23.30x13.40=312.22մ² ընդհանուր տարածքով: Արտադրամասում նախատեսվող լաբորատորիայում կատարվելու է շշերի ախտահանում, ջրի որակական անալիզներ: Շշերը բերվելու են պատրաստի վիճակում՝ շիշ արտադրող ընկերություններից, պայմանագրային հիմունքներով:

Ջրհավաք աղբյուրների շահագործումը նախատեսվում է իրականացնել փակ ռեժիմով, այսինքն ջրհավաք աղբյուրը սահմանված կարգով կկահավորվի համապատասխան սարքավորումներով, որտեղից քաղցրահամ ջուրը չժանգոտվող /խմելու որակի/ d=89մմ կամ d=108մմ տրամագծի խողովակաշարով ստորգետնյա եղանակով կտեղափոխվի տեղամասերից 500մ /2-րդ աղբյուրից/ և 1500մ /1-ին աղբյուրից/ հեռավորության վրա կառուցվող շշալցման արտադրամաս, որտեղ և կկատարվի ջրի շշալցումը: Ռելիեֆային պայմանները հնարավորություն են տալիս, որ ջուրն արտադրամաս հասնի ինքնահոս եղանակով՝ առանց մղիչ պոմպերի: Արդիական արտադրության ջրի հոսքագիծն իր մեջ ներառում է մաքրող ֆիլտրեր և հոսքագծից դուրս է գալիս մաքրված ջուր:

Նախատեսվում է ստորերկրյա քաղցրահամ ջրի շշալցման արտադրամասում տեղադրել մեկ հատ շշալցման հոսքագիծ՝ EBS-6500 մակնիշի /պլաստմասե և ապակե տարաներում շշալցման համար/, որի արտադրողականությունը կազմում է 2800 շիշ/ժամ: Արտադրամասի մեկ հոսքագծով և մեկ հերթափոխ աշխատելու պայմաններում կշշալցվի 22400 /2800x8/ մեկ լիտրանոց ջրի շիշ, երկհերթ աշխատելու դեպքում՝ 44800լիտր, երեք հերթափոխի դեպքում՝ 67200լիտր: Շշալցման արտադրամասի սարքավորումները և տեխնիկան ձեռք կբերվեն Ռուսաստանի Դաշնության համապատասխան գործարաններից:

Աղբյուրները տեխնիկապես լիարժեք կկահավորվեն ջրամատակարարում ապահովելու համար, կապտաժից հետո կկահավորվեն անհրաժեշտ գլխամասային սարքավորումներով, իսկ ջրերի ծավալի ավելացում չի նախատեսվում:

Արտադրամասի համար գազամատակարարում չի նախատեսվում, ուստի ջեռուցման և տաք ջրամատակարաման նպատակով տեղադրվելու է էլեկտրաէներգիայով աշխատող կաթսաներ: Արտադրամասի ջեռուցումը կատարվելու է էլեկտրական սալիկների օգնությամբ:

Արտադրամասի էլեկտրամատակարարումը իրականացվելու է համաձայն «ՀԷՑ» ՓԲԸ-ի կողմից 18.02.2022թ. տրված N ՏՊ-490-6(10)/0063 տեխնիկական պայմանի, համաձայն որի՝ տեղադրվելու է 400կՎԱ հզորության 10/0.4կՎ տրանսֆորմատորային ենթակայան: Էլեկտրամատակարարումը կատարվելու է «Գետիկ-4» ՀԷԿ-ի «Հովք» 10կՎ ուղղության օդային գծի 768 հենարանի ճյուղավորումով՝ մոտ 250մ երարության 10կՎ օդային գծով:

Տրանսպորտային միջոցների շահագործման համար Ընկերությունն օգտագործելու է գոյություն ունեցող գրունտային ճանապարհները նոր ճանապարհների կառուցում չի նախատեսվում: Արտադրամասի կառուցման աշխատանքները տևելու են 12 ամիս:

Համաձայն «ՀՀՇՆ 20.04_ Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմեր»-ի՝ համայնքը գտնվում է սեյսմիկ առաջին գոտում, գրունտների հնարավոր սեյսմիկ արագացումները կազմում են A=0.2-0.3g, 8-9 բալ երկրաշարժերի առավելագույն հզորությամբ:

Ստորերկրյա ջրերի ձևավորման համար կարևոր նշանակություն ունի ինչպես կլիման, այնպես էլ շրջանի երկրաբանական կառուցվածքը, ֆիզիկաաշխարհագրական պայմանները, ապարների լիթոլոգիական կազմը, տեղանքի մորֆոլոգիան: Ստորերկրյա ջրերի ձևավորման և սնուցման համար կարևոր նշանակություն ունեն մթնոլորտային տեղումները: Բարձրադիր

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ
ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION
OF EXPERTS

շրջաններում ձյան ծածկույթը մինչև ամառ պահպանվում է, որն էլ կարգավորում է ստորերկրյա ջրերի ռեժիմը:

Շրջակա միջավայրի վրա հնարավոր տնտեսական վնասի գնահատումն իրականացվում է ըստ շրջակա միջավայրի բաղադրիչների: Տնտեսական վնասը հաշվարկվում է հիմք ընդունելով՝ ՀՀ կառավարության 2015 թվականի մայիսի 27-ի N764-Ն որոշման պահանջներով և համաձայն կատարված հաշվարկների՝ ընդհանուր տնտեսական վնասը կկազմի 5027.32 ՀՀ դրամ:

Շինարարական աշխատանքների և շշալցման արտադրամասի կառուցման ընթացքում օգտագործվելու են փայտ, բնական քար /տուֆ/, ապակի, ամրաններ, մետաղական կոնստրուկցիաներ, բետոնանյութ և այլն: Բետոնն օգտագործվելու է շինությունների հիմքերի կառուցման և ամրացման համար: Այն բերվելու է մասնագիտացված կազմակերպություններից՝ պատրաստի վիճակում, համապատասխան բետոնախառնիչներով՝ ըստ պահանջի:

Աղբյուրների տարածքները մասնակի են կապտաժավորված /1-ին աղբյուրն է կապտաժավորված/, սակայն վերանորոգման կարիք ունեն: Արտադրամասի կառուցման շինարարության փուլում ամբողջ արտադրամասի տարածքը լինելու է շինհրապարակ, որտեղ տեղադրվելու են շինարարության համար մատակարարվող նյութերը, աշխատողների համար նախատեսվող տնակը, շինտեխնիկան: Արտադրական և կենցաղային կեղտաջրերի ջրահեռացման համար նախատեսվում է 90x90 չափերի բիոզուգարանի և 500մ³ տարողության պլաստմասե բաքի տեղադրում: Բիոզուգարանը տեղադրվելու է վարձակալական հիմունքով և աշխատանքների ավարտից հետո հանվելու են: Վերջիններիս մաքրումը կատարվելու է համապատասխան մասնագիտացված կառույցների կողմից՝ պայմանագրային հիմունքներով: Մթնոլորտային տեղումներից առաջացած ջրի հավաքման և հեռացման համար նախատեսվելու է առանձին հեղեղատար: Արտադրամասի հեռավորությունը Աղստև գետից կազմում է 150-170մ:

Շշալցման արտադրամասի կառուցման շինարարության փուլում օգտագործվելու են տեխնիկական և տրանսպորտային միջոցներ՝ 2-հորատող, 1-հարթեցնող, 1-ինքնաթափ, 1-էքսկավատոր, 1-բուդոզեր, 1-բեռնատար, 1-ամբարձիչ և այլ շինարարական սարքվորումներ:

Արտադրամասի նախագծային լուծումներում ապահոված են հակահրդեհային պահանջները՝ ՀՀՇՆ 21-01-2014 «Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգության» նորմերին համապատասխան: Տեղադրվելու են նաև լուսավորության, օդափոխության, հրդեհաշիջման համակարգեր: Արտադրամասն ապահովված է լինելու բնակչության սակավաշարժ խմբերի համար տեղաշարժվելու հնարավորություններով և պաշտպանության միջոցառումներով, որոնց լուծումները նախատեսվել են ՀՀՇՆ IV11.07.01-2006 (ՄՍՆ 3.02-05-2003) «Շենքերի և շինությունների մատչելիությունը բնակչության սակավաշարժության խմբերի համար» շինարարական նորմերի պահանջներին համապատասխան:

Շինարարության փուլում նախատեսվում է ջրային ռեսուրսների օգտագործում՝ բանվորների խմելու և կենցաղային նպատակներով օգտագործվող շինհրապարակի, ճանապարհների ջրցանի, արտաքին հրդեհաշիջման համար: Բանվորների խմելու ջուրը բերվելու է պատրաստի վիճակում՝ շշերով, մինչև ջրագծի անցկացումը: Կենցաղային և հրդեհամարման, ջրցանի նպատակով օգտագործվելու է տեխնիկական ջուր, որը բերվելու է պայմանագրային հիմունքներով՝ համապատասխան մասնագիտացված մեքենաներով: Այն լցվելու է տարածքում տեղադրվող 100մ³ տարողության պլաստմասե բաքի մեջ:

Շինարարության փուլում աշխատողների խմելու և կենցաղային նպատակներով ջրածախսը համաձայն կատարված հաշվարկի կկազմի՝ 61.24մ³/շին.ժամ., միջին օրականը՝ 0.232մ³:

Շահագործման փուլի ջրօգտագործման համար օգտագործվող ջուրը կօգտագործվի աշխատողների կենցաղային կարիքների, ինչպես նաև շշերի լվացման, լաբորատորիայի, ցնցուղարանի և հատակների լվացման համար:

Աշխատողների խմելու և կենցաղային նպատակներով ջրածախսը համաձայն կատարված հաշվարկի /հաշվարկը կատարվել է առավելագույն արտադրողականության և երեք

02543163
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

հերթափոխով աշխատելու պայմանների համար/ կկազմի՝ 186.12 մ³/տարի, միջին օրականը՝ 0.705 մ³: Աշխատողների կողմից կենցաղային կեղտաջրերի ծավալը համաձայն կատարված հաշվարկի կկազմի՝ 176.81մ³/տարի, միջին օրականը՝ 0.669 մ³:

Արտադրական ջրօգտագործումը կապված է շշերի լվացման հետ համաձայն կատարված հաշվարկի կկազմի՝ 1768 մ³/տարի, միջին օրականը՝ 6.7 մ³: Արտադրական հոսքաջրերի ծավալը կկազմի՝ 1679.6 մ³/տարի, միջին օրեկանը՝ 6.49 մ³:

Լաբորատորիայի ջրածախսը՝ համաձայն նորմերի և կատարված հաշվարկի կկազմի՝ 117.4 մ³/տարի, առավելագույն օրականը՝ 0.44 մ³: Լաբորատորիայի կեղտաջրերը կկազմեն՝ 115.92 մ³/տարի, օրականը՝ 0.359 մ³/օր:

Ցնցուղարանի ջրապահանջը համաձայն կատարված հաշվարկի կկազմի՝ 264մ³/տարի, օրականը՝ 1.0մ³/օր: Ցնցուղարանից կեղտաջրերը կկազմեն 258.7մ³/տարի, օրականը՝ 0.9մ³/օր:

Արտադրամասի հատակների լվացման նպատակով ջրածախսը համաձայն կատարված հաշվարկի կկազմի՝ 69.56 մ³/տարի, օրականը՝ 0.2635 մ³/օր:

Ընդամենը ջրածախսը կկազմի՝ 2405.08 մ³/տարի, կամ 9.108 մ³/օր:

Շահագործման փուլում՝ սարքավորումների լվացումից, արտադրամասի հիդրոմաքրումից, լաբորատորիայում և տնտեսա-կենցաղային ջրօգտագործումից առաջացած կեղտաջրերի հեռացման նպատակով նախատեսվում է արտադրամասում տեղադրել ռուսական արտադրության «ЯЛМА-50П» տեսակի /քաշը՝ 2.8 կգ, լայնությունը՝ 2.2մ, երկարությունը՝ 5մ, հզորությունը՝ 20.91մ³/ 1 կենսաբանական մաքրման կայան /ՄԿ/: Այն պատրաստված է պոլիպրոպիլեն/պոլիէթիլենից, նախատեսված է տնտեսական կենցաղային կեղտաջրերի վնասազերծման համար: Կայանը լայն կիրառություն ունի Ռուսաստանի Դաշնությունում:

Առաջարկվող մաքրման կայանի արտադրողականությունն ըստ տեխնիկական պարամետրերի կազմում է 10մ³/օր և կարող է սպասարկել 50 մարդու: Այն ունի բարձր հուսալիություն և աղմուկի շատ ցածր մակարդակ: Կայանի աշխատանքը ավտոմատացված է և շահագործման ընթացքում չի պահանջվում պրոֆեսիոնալ գիտելիքներ: Մեկ մաքրման կայանի տեղադրումը լիովին կապահովվի դեպի մաքրման կայան ուղղվող 8.45 մ³/օր հոսքաջրերի մաքրումը: Մաքրման համակցված մեթոդը /թթվածնային և ոչ թթվածնային/ հնարավորություն է տալիս կեղտաջրերի 98% մաքրում, պահպանելով շրջակա միջավայրի աղտոտումը կեղտաջրերից և ապահովել մարդկանց առողջության անվտանգության երաշխիքը: Կայանի բոլոր մասերը, որոնք շփման մեջ են գտնվում կեղտաջրերի հետ, պատրաստված են չժանգոտող կայուն նյութից՝ պոլիպրոպիլենից: Իր բարձր ջերմամեկուսացմամբ պայմանավորված մաքրման կայանն անխափան աշխատում է նաև ձմռան պայմաններում: Նախատեսված մաքրման կայանը համաձայն իր անձնագրային տվյալների՝ ապահովելու է 98% կեղտաջրերի մաքրում, ապահովելով համապատասխանությունը մակերևութային ջրերի հիգիենիկ պայմաններին և թույլատրելի նորմերին: Կայանը շահագործվում է անաղմուկ, բացարձակապես բացակայում է հոտը, կայուն է հոսանքի տատանումների նկատմամբ, հեշտ է շահագործվում, տեղադրվում է հորիզոնական՝ խնդիր չառաջացնելով գրունտային ջրերի հոսքին: Օդափոխման բաքում առաջանում է ակտիվացված տիղմ, որը հեռացվում է համապատասխան մասնագիտացված մեքենաներով՝ 2 տարին 1 անգամ: Նստվածքը կարող է օգտագործվել որպես պարարտանյութ կամ տեղափոխվել կենցաղային աղբի հետ համատեղ: Մաքրման կայանն իրենից ներկայացնում է անջրթափանց, պլաստիկե տարողություն, կեղտաջրերի մաքրման արդյունքում կայանից դուրս է գալիս անհոտ և անհամ տեխնիկական ջուր: Կայանի ելքում մաքրված կեղտաջրերի ցուցանիշները ցուցանիշները համապատասխանում են ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի՝ «ԿԱՀԽՎԱԾ ՏԵՂԱՆՔԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ՝ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՋՐԱՎԱԶԱՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՋՐԻ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՆՈՐՄԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N

ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

75-Ն որոշմամբ ամրագրված մակերևութային ջրերի որակի ցուցանիշներին՝ Աղստև գետի համար սահմանված նորմերին:

Մաքրված ջրերը կարող են բաց թողնվել մակերևութային ջրային տարածություն կամ օգտագործվել արտադրամասի տեխնիկական կարիքների համար, մասնավորապես կանաչ տարածքների ոռոգման նպատակով:

Նախատեսվող գործունեության տարածքներում հողային տիպը անտառային մուգ դարչնագույն, տարալվացված և կարբոնատային հողերով, չափավոր խոնավ հողերն են, որոնք աչքի են ընկնում իրենց միջին հզորությամբ: Բնորոշ է փոքր հզորությունը՝ առավելագույնը մինչև 0.3մ: Նախատեսվող արտադրամասի տարածք տարիներ շարունակ օգտագործվել է որպես վարելահող, այժմ անօգտագործելի հող է:

Նախատեսվող գործունեության իրականացման համար նախատեսվում է կատարել 2728.6մ^3 ծավալի հողային աշխատանքներ: Հողային զանգվածն առաջանալու է՝ ստորգետնյա խողովակաշարերի անցկացման՝ 1461.6մ^3, իր ենթակառուցվածքներով արտադրամասի կառուցման աշխատանքներից՝ 1267մ^3:

Հողային զանգվածից առանձնացվելու է 925.8մ^3 ծավալի բուսահողը: Խողովակաշարերի հողային զանգվածը կուտակվելու է խրամուղուն զուգահեռ փորվածքների եզրին, խողովակաշարի տեղակայվելուց հետո անմիջապես կօգտագործվի հետլիցքի համար, այնուհետև կհարթեցվի բուսահողի շերտով: Փորվածքները կատարվելու են հաջորդաբար: Արտադրամասի կառուցումից առաջացող հողային զանգվածը և բուսահողը կուտակվելու է տարածքում առանձին-առանձին՝ ծածկված վիճակում: Հողաբուսաշետը նախօրոք կհեռացվի և լցակույտի ձևով կպահպանվի առանձնացված և ծածկված վիճակում: Հողային զանգվածը շինարարական աշխատանքերի ավարտից հետո օգտագործվելու է հետլիցքի և տարածքի հարթեցման համար: Բնահողը և բուսահողը օգտագործվելու է տարածքի ռեկուլտիվացիայի՝ բարեկարգման և կանաչապատման համար:

Շինարարության փուլում կառաջանան լանդշաֆտի որոշակի փոփոխություններ՝ պայմանավորված հողային աշխատանքներով, որոնք լինելու են ժամանակավոր: Լանդշաֆտի փոփոխությունը տեսանելի չի լինի բնակավայրերից հեռավորության պատճառով: Իսկ ավտոճանապարհներից պատկերների փոփոխությունը էական չի լինի: Լանդշաֆտի անտառապատ հատվածների փոփոխություններ չեն առաջանալու, քանի որ ծառահատումներ չեն կատարվելու:

Հովքի քաղցրահամ ջրերի թիվ 1 և 2 աղբյուրներից ջրի արդյունահանման ընթացքում ընդերքօգտագործման թափոններ չեն առաջանալու: Հետևաբար ընկերությունը ընդերքօգտագործման թափոնների կառավարման պլան և դրա իրականացման համար ֆինանսական երաշխիքների չի նախատեսում:

Գործունեության իրականացման շինարարության փուլում առաջանալու են թափոններ.

- շինարարական աղբի տեսքով (ծածկագիր՝ 91200601 01 00 4)՝ 100տ, նյութերի մնացորդներ (ավազ, խիճ, մետաղյա լարեր, պլաստմասե իրեր և այլն),
- կենցաղային աղբ (ծածկագիր՝ 91200400 01 00 4)՝ շինարարության փուլում՝ 1.8տ/տարի, շահագործման փուլում՝ 10.8տ/տարի:
- բանեցված յուղոտված լաթեր, որոնք պատկանում են վտանգավորության 4-րդ դասին (ծածկագիր՝ 5820060001 01 4), ինչը 1:10 խառնվում է կենցաղային աղբին և տեղափոխվում մոտակա աղբավայր կամ կհանձնվի լիցենզավորված կազմակերպություններին:

Շինաղբը կուտակվելու է տարածքում, հավաքվելու են հատուկ տարողությունների մեջ, տակդիրների վրա՝ ծածկված վիճակում և պարբերաբար Կապալառու կազմակերպությունը տեղափոխելու է համայնքապետարանի կողմից հատկացված վայր՝ Դիլիջանի համայնքային աղբավայր, պայմանագրային հիմունքներով:

ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

Շինարարության փուլում կենցաղային աղբը կուտակվելու է պոլիէթիլենային պարկերի մեջ (առավելագույնը 35լ տարողության), որը հեռացվելու է տարածքից ընկերության սեփական մեքենաներով՝ Դիլիջանի համայնքային աղբավայր, պայմանագրային հիմունքներով:

Շահագործման փուլում առաջացող կենցաղային աղբը կուտակվելու է տարածքում տեղադրվող 8 հատ 1.1x1.5մ^3 տարողության համապատասխան աղբի տարրաներում: Այն պարբերաբար հեռացվելու է պայմանագրային հիմունքներով՝ Դիլիջանի համայնքային աղբավայր:

Շահագործման փուլում առաջանալու են.

- Խոտանված պոլիէթիլենե շշեր, կափարիչներ, պիտակներ և փաթեթավորման թաղանթ ծածկագիր՝ 57109900 01 00 4, վտանգավորության 4-րդ դաս: Նմանատիպ շշալցման արտադրամասերում առաջացող թափոնների նորման՝ հիմք ընդունելով առաջատար սարքավորումների տեխնոլոգիաները, կազմում է 0.01%: Երեք հերթափոխի աշխատելու դեպքում տարեկան /264 աշխատանքային օր/ առաջանալու է մոտ 177408 խոտանված շիշ: Խոտանված շշերը օգտագործվելու են որպես երկրորդային հումք կամ վաճառվելու են վերամշակող կազմակերպություններին:
- Թղթի և ստվարաթղթի տարատեսակ թափոններ՝ վտանգավորության 4-րդ դաս, ծածկագիր՝ 18790100 01 00 4 /կոշտ/: Թղթի թափոնները վաճառվելու են թղթի վերամշակման ձեռնարկություններին:
- Կարծրացված սոսնձի թափոններ՝ վտանգավորության 4-րդ դաս, ծածկագիր՝ 55700600 01 01 4 /կոշտ/: Այն խառնվելու է կենցաղային աղբին և տեղափոխվելու է աղբավայր:

Թափոնները մինչև համապատասխան կազմակերպություններին հանձնելը կուտակվելու են նախատեսված բետոնապատ մակերեսի վրա՝ ծածկված տարածքում:

Թիվ 1 քաղցրահամ ջրի աղբյուրը գտնվում է սողանքային գոտում: Սողանքային մարմինը որի սահմաններում գտնվում է թիվ 1 աղբյուրը հարաբերական կայուն է, բացակայում են ակտիվության նշանները: Նշված աղբյուրները շուրջ 15 տարի գործում են, դրանց տեղադիրքերի և հարակից տարածքի բուսական ծածկույթի փոփոխություն չի եղել, ճեղքեր չեն առաջացել, որը և վկայում է, որ սողանքը հարաբերական կայուն է: Այս մասին նշված է նաև Ճապոնիայի միջազգային զարգացման գործակալության մասնագետների կողմից կատարված ՀՀ սողանքային աղետի գնահատման հաշվետվության մեջ: Շահագործման փուլում արտակարգ իրավիճակ կարող է ստեղծվել արտադրամասում հնարավոր հրդեհային իրավիճակների և այլ երևույթների /երկրաշարժ, քամի և այլն/ սարքավումների խափանումների, վթարների դեպքում: Վերջիններիս կանխման համար մշակվելու է «Աղետների և վթարների Կառավարման պլան», որը կհամաձայնեցվի ՏԻՄ-ի և ԱԻՆ համապատասխան ստորաբաժանման հետ: Արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգությունն ապահովելու նպատակով տարածքում տեղադրվելու են հակահրդեհային վահանակ և կրակամարիչներ:

Գործունեության տարածքում աղմուկի և տատանումների աղբյուր կարող են հանդիսանալ ավտոտրանսպորտային միջոցները /շինարարության փուլ/ և շահագործման փուլում արտադրամասում՝ սարքավորումների և օդափոխության համակարգի աշխատանքի արդյունքում:

Շինարարական աշխատանքների ընթացքում ավտոմեքենաների և սարքավորումների աշխատանքից աշխատատեղերում աղմուկի մակարդակը 80 դԲ (A) գերազանցելու դեպքում աշխատողները պետք է օգտագործեն անհատական պաշտպանական միջոցներ /գլխարկներ, ականջակալներ և այլն/: Այնուամենայնիվ, հաշվի առնելով շինարարական աշխատանքների կարճաժամկետ բնույթը, աշխատակիցների վրա աղմուկի ազդեցությունը կրելու է կարճատև և ժամանակավոր բնույթ:

ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

Բնակավայրերի համար աղմուկի սահմանված թույլատրելի մակարդակը ցերեկային ժամերի համար կազմում է 55 դԲ (A), կամ ֆոնային մակարդակի ոչ ավել քան 3 դԲ (A) ավելացում: Շինարարության ընթացքում բնակավայրերին կամ առանձին բնակելի տներին, աղմուկը չի կարող հասնել, հաշվի առնելով բնակավայրերից ունեցած հեռավորությունը՝ Հովքը 0,8 կմ է:

Շահագործման փուլում որոշակի աղմուկ կնկատվի արտադրամասում, սակայն այն կլինի ոչ էական, քանի որ շշալցման արտադրամասի տեխնոլոգիան լուծումները կատարվելու են ժամանակակից անաղմուկ սարքավորումներով: Շշալցման սարքի ընտրված մոդելը տեղադրված է աղմկապաշտպանված պատյանում, ինչը զգալի կնվազեցնի աղմուկի մակարդակը:

Նախատեսվող գործունեության իրականացումը կնպաստի մարզի արդյունաբերության ոլորտում նորագույն տեխնոլոգիաների ներդրմամբ կարողությունների զարգացմանը, խթանելով ձեռնարկատիրական գործունեությանը՝ ներդրումներին: Շինարարության ընթացքում աշխատելու են 15 մարդ, որից ինժեներ մասնագետներ՝ 2 և բանվորներ՝ 13 մարդ: Աշխատելու են 6 օր՝ 8 ժամյա աշխատանքային գրաֆիկով:

Շահագործման փուլում ներգրավելու են 30 մարդ: Արտադրամասն աշխատելու է հերթափոխով՝ երկու հերթափոխ, անհրաժեշտության դեպքում՝ երեք հերթափոխով: Արտադրության արդյունավետությունը բարձրացնելու համար նախատեսվում է ժամանակակից սարքվորումների ներդրում և բազմափորձ մասնագետների ներգրավում: Աշխատատեղերի համար առաջնահերթությունը տրվելու է համայնքի բնակիչներին, նպատակ ունենալով նպաստել տեղի բնակչության սոցիալական պայմանների և կենսամակարդակի բարելավմանը:

Գործունեության իրականացումը դրական ազդեցություն կունենա նաև համայնքի սոցիալ-տնտեսական ոլորտում: Ընկերությունը նախատեսում է բարեգործության շջանակներում համայնքի շուրջ 50 երեխաներին ապահովվել սպորտային հագուստով, կազմակերպել դպորցի հարևանությամբ գտնվող սպորտային հրապարակի կառուցման աշխատանքները:

Ընկերությունը նախատեսում է նաև համայնքի նկատմամբ պարտավորության շրջանակներում աջակցել համայնքի կարիքների բավարարման աշխատանքներին, աջակցել օգնության ծրագրերին, ֆինանսական ներդրումներ կատարել համայնքի բյուջե՝ 500 հազ. ՀՀ դրամ.

- Հովք համայքի զարգացման սոցիալ-տնտեսական ծրագրերի մասնակցություն՝ յուրաքանչյուր տարի 300 հազ. ՀՀ դրամ:
- Ներդրումներ դպրոցի կարիքների համար՝ յուրաքանչյուր տարի՝ 200 հազ. ՀՀ դրամ:

Նախատեսվում է շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունը և վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր, այդ թվում՝

- շինարարական աշխատանքների և ճանապարհների շահագործման ընթացքում, փոշենստեցման նպատակով՝ տարվա չոր եղանակներին կատարվելու է գրունտի խոնավեցում, անհրաժեշտության դեպքում՝ ճանապարհների ջրցան,
- ճանապարհի ջրցանը և գրունտի խոնավեցումը կատարվելու է այնպես, որպեսզի չառաջանան մակերևութային հոսքաջրեր,
- կիրառվող տեխնիկան, սարքավորումները և տրանսպորտային միջոցներն օգտագործվելու են միայն սարքին վիճակում, բացառվելու են անսարք վիճակում գտնվող և արտահոսքեր ունեցող մեքենաների օգտագործումը, պարբերաբար ստուգվելու և կարգաբերվելու են տրանսպորտային միջոցների շարժիչները,
- նվազագույնի է հասցվելու շինհրապարակում օգտագործվող նյութերի և թափոնների քանակը, նյութերը և թափոնները պահվելու են ծածկված վիճակում՝ փոշու հնարավոր տարածումից խուսափելու համար,
- նյութերի, շինաղբի տեղափոխումը կատարվելու է փակ ծածկով մեքենաներով,

02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ
ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION
OF EXPERTS

- բացառվելու է տարածքում թափոնների բաց այրումը,
- շինարարական նյութերը տեղադրվելու են հատուկ տակդիրների վրա,
- հողաբուսաշերտի պահպանումը կատարվելու է համաձայն՝ ՀՀ կառավարության 2017 թվականի նոյեմբերի 2-ի «Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու և ՀՀ կառավարության 2006 թվականի հուլիսի 20-ի N 1026-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1404-Ն որոշման դրույթներին համապատասխան,
- հնարավորինս բացառվելու է տարածքում առկա բուսահողի վրա բացասական ազդեցությունները՝ թափոններով և կեղտաջրերով աղտոտումը,
- բուսահողը ժամանակավորապես պահվելու է տարածքի առանձնացված վայրում, թմբերի տեսքով՝ ծածկված անջրթափանց թաղանթով,
- շինարարական աշխատանքների ավարտից հետո բուսահողն օգտագործվելու է տարածքի բարեկարգման և կանաչապատման նպատակով,
- նվազագույնի է հասցվելու բաց փորվածքների քանակությունը և վերջիններիս հետլիցքն իրականացվելու է հնարավորինս կարճ ժամկետներում,
- շինարարության փուլում օգտագործվող տրանսպորտային միջոցների լիցքավորումը և տեխնիկական սպասարկումը կատարվելու է տարածքից դուրս՝ հատուկ մասնագիտացված կազմակերպություններում,
- շինարարության համար անհրաժեշտ բետոնախառնուրդը բերվելու է պատրաստի վիճակում մասնագիտացված կազմակերպությունների մեքենաներով՝ ըստ պահանջի,
- մեքենաների սպասարկումը /լվացում, լիցքավորում/ կատարվելու է մասնագիտական կետերում՝ շշալցման արտադրամասի կառուցման ընթացքում մետաղների, ինչպես նաև քսայուղերի և դիզելային վառելիքի արտահոսքը դեպի մոտակա ջրային ռեսուրս բացառելու նպատակով,
- ջրային ռեսուրսները կեղտաջրերի աղտոտումից պահպանելու նպատակով նախատեսվում է բիոզուգարան, որը մաքրվելու է մասնագիտական կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով,
- ջրհավաք աղբյուրների շուրջ կառուցվելու է առաջին /խիստ ռեժիմի/ սանիտարական պահպանության գոտի՝ աղբյուրների ելքերը աղտոտտումից պահպանելու նպատակով,
- աղբյուրների կապտաժային կառույցի վրա տեղադրվելու են փականներ, բացառելով ջրահեռացվող ջրի օգտագործման հնարավորությունը,
- կատարվելու է ջրհավաք աղբյուրների ակունքների շուրջ հիմքերի հուսալի հիդրոիզոլացիա՝ դեպի աղբյուրները մակերևութային աղտոտված ջրերի ներթափանցումը կանխարգելելու նպատակով,
- ապահովվելու է ջրերը աղտոտումը և տեխնածին գործընթացների վնասակար ազդեցությունից,
- բացառվելու են՝ ծառահատումները, բնական ռելիեֆի արհեստական փոփոխությունը,
- շինարարական աշխատանքներն իրականացվելու են բացառապես ցերեկային ժամերին՝ տարածքում հնարավոր գոյություն ունեցող որոշ կենդանիների կենսակերպի վրա ազդեցությունից խուսափելու համար,
- շինարարական աշխատանքների ընթացքում շրջակա միջավայրը և գործունեության տարածքը զերծ է պահվելու թափոնների կուտակումներից,
- առաջացած կենցաղային աղբը կուտակվելու է պոլիէթիլենային պարկերի մեջ /առավելագույնը 35 լ տարողության/, հեռացվելու է ընկերության սեփական մեքենաներով, կենցաղային աղբի տեղափոխման պայմանագրի կնքումից հետո՝ Դիլիջանի համայնքային աղբավայր,
- բացառվելու է այլ տարածքների օգտագործումն առանց համապատասխան թույլտվության,

ՀՀ ԲՆԱՊԱՀՊՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЭКСПЕРТНОЕ ЗАКЛЮЧЕНИЕ ОКРУЖАЮЩЕЙ СРЕДЫ МИНИСТЕРСТВА ЧРЕЗВЫЧАЙНЫХ СИТУАЦИЙ РА
COMMISSION OF EXPERTS

- բացառվելու է աղբի կուտակումը շիհրապարակից դուրս՝ հասարակական և կանաչապատ տարածքներում,
- մետաղական և այլ թափոնները կհանձնվեն համապատասխան լիցենզավորված կազմակերպություններին՝ դրանց հետագա վերամշակման և օգտագործման համար,
- նախատեսվող գործունեության վայրն ապահովելու է հակահրդեհային հիդրատներով, կրակմարիչներով և շանթարգելներով,
- աշխատակիցներին նախապատրաստելու են արտակարգ իրավիճակներում գործելու նպատակով, տարածքն ապահովված է լինելու առաջին օգնության ծառայությունների հետ հուսալի կապով,
- հեղուկ նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար,
- տեխնածին աղետների /քամու ուժգնացում, փոթորիկ, մրրիկ, երկրաշարժ, սողանք/ և այլ վտանգավոր երևույթների ժամանակ շինարարական աշխատանքները դադարեցվելու են, անջատվելու են էլեկտրասնուցման սարքերը, ապահովելու են վտանգավոր տարածքից մարդկանց տարհանումը,
- սողանքային երևույթների հայտնաբերման դեպքում ընկերությունը կդիմի համապատասխան լիցենզավորված կազմակերպությունների՝ մասնագիտական գնահատական ստանալու համար: Հետագա աշխատանքները կշարունակվեն համապատասխան թույլտվություն ստանալուց և հակասողանքային միջոցառումներ կիրառելուց հետո:
- Շահագործման փուլում աղբյուրների ջրային ռեժիմի և սանիտարական նորմերի պահպանման նպատակով նախատեսվում է.
  - ջրի նմուշառում և քիմիական լաբորատորիաներում քիմիական անալիզ՝ ջրի կոշտությունը, հանքայնացումը, թթվայնությունը և այլ ֆիզիկական հատկությունները նորմերին համապատասխանությունը ստուգելու նպատակով,
  - կապտաժային սարքավորումների պարբերական ստուգումներ,
  - մաշված, շարքից դուրս եկած սարքավորումների ապամոնտաժում և նորով փոխարինում,
  - ապահովելու են ստորերկրյա քաղցրահամ ջրերի պաշարների վերականգնողական առանձնահատկությունները,
  - քաղցրահամ ջրի աղբյուրների արդյունաբերական շահագործումը կատարվելու է չժանգոտվող կապտաժային խողովակաշարով՝ խմելու ջրի որակի պահպանման նպատակով,
  - արտադրամասի տարածքի, հատակների ախտահանում, մաքրում,
  - քաղցրահամ ջրի արդյունահանումը կատարվելու է տեղամասի հիդրոերկրաբանական պայմաններին, նրանց քիմիական կազմին, ջերմաստիճանին և սահմանված ռեժիմին համապատասխան,
  - արդյունահանման ժամանակ պահպանվելու է քաղցրահամ ջրի քանակի ու որակի կայունությունը,
  - աղբյուրների շահագործման ընթացքում բացառվելու է շահագործվող ջրհավաք աղյուրից լիազոր մարմնի կողմից հաստատված պաշարների քանակից ավելի ջրի արդյունահանումը:

Շահագործման փուլում բացվելու է 30 աշխատեղ՝ հերթափոխային գրաֆիկով, այն ունենալու է դրական ազդեցություն.
- աշխատատեղերի համար նախընտրությունը տրվելու է համայնքի բնակիչներին,
- նպաստելու է համայնքում գործազրկության նվազմանը, սոցիալական պայմանների բարելավմանը,
- նպաստելու է համայքում ներդրումների աճին, հետևաբար համայնքային բյուջեի ավելացմանը, համայնքային կարողությունների զարգացմանը:

Քաղցրահամ ջրի թիվ 1 և թիվ 2 աղբյուրների շինարարական աշխատանքների ընթացքում՝ խողովակաշարի անցկացման արդյունքում խախտվող հողատարածքների մակերեսների

/2000x1.25=2500մ²/ ռելուլտիվացիայի համար ընկերությունը նախատեսում է ներդնել 200000 ՀՀ դրամ:

Շահագործման ժամկետի ավարտից հետո ընկերությունը հետագա հնարավորությունների բացակայության պայմաններում կատարելու է կայանի սարքավորումների ապամոնտաժում և տարածքի նախկին տեսքի բերում: Գործողությունները կատարվելու է համայնքի վերահսկողությամբ:

Հանքի փակումը կատարվելու է համաձայն փակման ծրագրի, որտեղ ներառված են տեղեկատվություն՝ հանքի փակման ծրագրի կազմման ելակետային տվյալների, նյութերի, խնդիրների՝ արտադրական լցակույտերի, ֆինասական երաշխիքների, շահագործման հետևանքով շրջակա միջավայրի փոփոխություններ, կատարվելիք միջոցառումների, վերաբերյալ:

Ստորերկրյա ջրերի շահագործման ժամանակ խախտված հողատարածքներ չեն առաջանում, այդ իսկ պատճառով նման ծրագիր չի ներկայացվել: Հանքի փակման ծրագրի կազմման հիմնական նպատակը ջրի արդյունահանման ընթացքում խախտված շրջակա միջավայրի բաղադրիչների վերականգնման և հետագա մոնիթորինգի իրականացման սկզբունքային հիմնախնդիրների ձևակերպումն է:

Հանքավայրի քաղցրահամ ջրի արդյունահանման ժամկետը լրանալուց հետո կատարվելու է հանքի ֆիզիկական փակման փուլը՝ աղբյուրների կապտաժային համակարգի, կառուցված շինությունների, տեղադրված սարքավորումների, ջրհավաք ավազանից գործարանի տարածք տանող ջրատար խողովակաշարի ապամոնտաժում /բացառությամբ սանիտարական պահպանության 1-ին գոտու ապամոնտաժումը, որը կպահպանվի՝ ջրային ռեսուրսը աղտոտումից պահպանելու նպատակով/: Նշված աշխատանքները կատարվելու են ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան, հաշվի է առնվելու ազդակիր համայնքի դիրքորոշումը:

Ընկերության կողմից հանքավայրի փակման ժամանակ ներդրումների չափը կկազմ 3000000 ՀՀ դրամ, որը շուկայական գների փոփոխության հետ կապված ենթակա է ինդեքսավորման:

Ստորերկրյա քաղցրահամ ջրերի արդյունահանման ընթացքում արդյունահանմանը զուգընթաց ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան Ընկերության կողմից նախատեսված է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն/մեղմացմանն ուղղված մշտադիտարկումներ՝ քաղցրահամ ջրի աղբյուրների և շալգման արտադրամասի տարածքներում, որպես օբյեկտներ դիտարկվել են՝ ջուրը, մթնոլորտային օդը, հողային ծածկույթը, կենսաբանական միջավայրը:

ՇՄԱԳ հաշվետվությունում նախատեսվել են նաև միջոցառումներ, ուղղված՝ աշխատանքային միջավայրում աշխատողների անվտանգությանը, արտակարգ իրավիճակների արձագանքմանը, հնարավոր ազդեցությունների մեղմմանն ու կանխարգելմանը: Բոլոր միջոցառումներն իրենց գործողություններով ամփոփվել են բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում:

Տավուշի մարզի Հովքի ստորերկրյա քաղցրահամ ջրի հանքավայրի թիվ 1 և թիվ 2 աղբյուրներով հաշվարկված և հաստատված քաղցրահամ ջրի պաշարի պատշաճ շահագործման համար ընկերությունը նախատեսում է կատարել ֆինանսական ներդրումներ 264 200 000 ՀՀ դրամ գումարի չափով: Ներդրման արժեքի մեջ մտնում են շինարարության և շահագործման, փակման փուլերում կատարվող, ինչպես նաև շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր բացասական ազդեցությունների մեղմմանն ուղղված միջոցառումների իրականացման բոլոր ծախսերը:

Պատճառաբանական մաս. Տավուշի մարզի Հովքի ստորերկրյա քաղցրահամ ջրի աղբյուրների թիվ 1 և 2 տեղամասերում արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա

02543163
ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION
OF EXPERTS

ազդեցության գնահատման /ՇՄԱԳ/ հաշվետվության փորձաքննությունն իրականացվել է՝ համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի պահանջներով: Գնահատման և փորձաքննության փուլերում գործունեության իրականացման վերաբերյալ Տավուշի մարզի Դիլիջան համայնքում անցկացվել են չորս հանրային քննարկումներ, որոնց ընթացքում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության: Մասնակիցների կողմից կարևորվել է նախատեսվող աշխատանքներում աշխատատեղերի ստեղծումն ու Ընկերության կողմից համայնքում սոցիալական ծրագրերի իրականացումը:

Փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ՝ Առողջապահության, Արտակարգ իրավիճակների, Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, նախարարություններից, Քաղաքաշինության կոմիտեից, Կադաստրի կոմիտեից, Տավուշի մարզպետարանից, Շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից, Դիլիջանի համայնքապետարանից, որոնց կողմից ներկայացված կարծիքներն ևս հաշվի են առնվել փորձաքննության գործընթացում և ՇՄԱԳ հաշվետվության լրամշակումներում:

Ամփոփելով ՇՄԱԳ հաշվետվության բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք առնչվում են շինարարական աշխատանքների հետ, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ :

Քաղցրահամ ջրի արդյունահանման ընթացքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում, քանի որ գործունեությունը չի ուղեկցվում արտադրական և ընդերքօգտագործման թափոնների առաջացմամբ, մթնոլորտային արտանետումներով, ինչպես նաև վտանգավոր արտահոսքերով:

Փորձաքննական պահանջներ

1. Աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է ապահովել և պահպանել՝
- ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի N 15-Ն հրամաններով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջները,
- ՇՄԱԳ հաշվետվությունում և նախագծային փաստաթղթերում ամրագրված տեխնոլոգիական լուծումների, բնապահպանական պահանջների կատարումը, ինչպես նաև Դիլիջան համայնքում և Հովք բնակավայրում Ընկերության կողմից նախատեսված սոցիալական ծրագրերի իրականացումը,
- բնապահպանական կառավարման պլանում և մշտադիտարկումների պլանում նախատեսված միջոցառումների իրականացումը, ինչպես նաև իրականացման ժամանակացույցերը:
2. Գործունեության իրականացման ընթացքում աշխատողների անվտանգության և առողջության ապահովման համար անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 23-րդ գլխի պահանջներով:
3. Արտադրամասի կառուցման շինարարական աշխատանքների ընթացքում որպես պարտադիր պահանջներ, անհրաժեշտ է՝
- սահմանազատել և ժամանակավոր ցանկապատել շինարարական հրապարակը, անցկացնել լուսավորություն և տեղադրել հնարավոր վտանգների մասին նախազգուշացնող նշաններ,
- շինությունները ծածկել համապատասխան բարձրությամբ փոշու տարածումը կանխող ցանցով,
- շինհրապարակից դուրս եկող մեքենաների անվադողերը լվանալ,

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՐՈՇՈՂԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

- բետոնի տեղափոխումն իրականացնել ՇՄԱԳ հաշվետվությունում նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:

4. Շինարարական աշխատանքների և շահագործման ընթացքում առաջացող տարբեր տեսակի թափոնների հավաքումը, ժամանակավոր պահումը, տեղափոխումը և տղեադրումը անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, մասնագիտական ծառայությունների կողմից (պայմանագրային հիմունքներով)՝ նախապես համաձայնեցնելով Դիլիջանի համայնքապետարանի հետ, ինչպես նաև բացառել տարածքում թափոնների բաց այրումը:

5. Քանի որ Հովքի ստորերկրյա քաղցրահամ ջրի աղբյուրների թիվ 1 և 2 արդյունահանման տեղամասերը գտնվում են Անտառային կոմիտեի «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Իջևանի անտառտնտեսություն» մասնճյուղի տարածքում, ուստի անհրաժեշտ է աշխատանքներն իրականացնելիս առաջնորդվել ՀՀ կառավարության 2007 թվականի օգոստոսի 30-ի «Պետական անտառային հողերում անտառային տնտեսության վարման և անտառօգտագործման հետ չկապված աշխատանքների իրականացման կարգը սահմանելու մասին» N 1045-Ն որոշման համապատասխան դրույթներով՝ բացառելով ծառահատումները և պահպանելով անտառային և հողային օրենսգրքերի պահանջները:

6. Համաձայն ՀՀ ընդերքի մասին օրենքի 1-ին հոդվածի 4-րդ մասի՝ ստորերկրյա քաղցրահամ ջրերի արդյունահանման առանձնահատկությունները սահմանվում են ՀՀ ջրային օրենսգրքով (ՀՀ ջրային օրենսգիրք, Գլուխ 4.1), իսկ համաձայն ՀՀ ջրային օրենսգրքի 21-րդ հոդվածի՝ ցանկացած տեսակի ջրօգտագործման համար յուրաքանչյուր ոք պարտավոր է ստանալ ջրօգտագործման թույլտվություն, ինչը տրամադրում է ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության մարմինը՝ ներկայացված հայտի հիման վրա (ՀՀ ջրային օրենսգրիրք հոդված 29,30), ուստի անհրաժեշտ է նախքան գործունեությունը սկսելը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ստանալ ջրօգտագործման թույլտվություն:

7. Աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի պահանջով՝ «Հիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին»:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Վ.Է.Վ.» ՍՊԸ-ի կողմից ներկայացված, Տավուշի մարզի Հովքի ստորերկրյա քաղցրահամ ջրի աղբյուրների թիվ 1 և 2 տեղամասերում արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխ. մասնագետ՝ Վրեժ Վարդանյան